## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## 27.10.2020թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/52-2» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «19» «11» 2020թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Է. Հովսեփյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 27.10.2020թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/52-2» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| *Դատական դեպարտամենտ* | *«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ* |
| Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1 | Հասցե՝ ք. Երևան, Դրոյի 8/4 |
| | ք. Երևան, Զավարյան 57/1 |
| Հ/Հ՝ 900011025757 | Հ/Հ՝ 24105020675400 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 00889965 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Յունիբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ |
| Ղեկավար՝ Կ. Փոլադյան | Տնօրեն՝ Է. Հովսեփյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

**Հավելված N 1**
**« 19 » « 11 » 2020թ. կնքված N 1 համաձայնագրի**

*(Հավելված N 2*
*« 27 » « 10 » 2020թ. կնքված*
*N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/52-2» ծածկագրով պայմանագրի)*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*ՀՀ դրամ*

| Ապրանքի | | | | | |
|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | |
| | | | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 2 | 18211500/503 | Բաճկոն | 2 204 820 | 2 204 820 | **2 204 820** |
| 6 | 18421170/502 | Գոտիներ | 1 749 000 | 1 749 000 | **1 749 000** |

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

ՀՀ՝ 900011025757
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Վ. Փոխանյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
***«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Դրոյի 8/4
ք. Երևան, Ձավարյան 57/1
ՀՀ՝ 24105020675400
ՀՎՀՀ՝ 00889965
«Յունիբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ

Տնօրեն՝ Է. Հովսեփյան

/ստորագրություն/
Կ.Տ